ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԱՎԱՆՆԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

ՎԱՎԱՆՆԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐՍԴԱՐԱՆ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՓԱՐԻԶԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ԿԱՐԴԻՆԱԼ
ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ ՀԵՏ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՍԻՆ

Մայիսի 21-ին, երկուշաբթի:

Առավոտյան ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը ինքնաշարժով ուղևորվեց դեպի Դեսին և առաջին իսկ առիթով քաղաքավարական այցելություն տվեց քաղաքագլուխ Պիեռ Մուտենին, որը ջերմորեն ողջունեց Հայոց Հայրապետին և բարի գալուստ մաղթեց Նրան հետևյալ ճառով.

ԴԵՍԻՆԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԵՎ ՌՈՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՊԻԵՌ ՄՈՒՏԵՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Գերաշնորհ սրբազան հայրեր,

Քաղաքապետական խորհրդի հարգարժան ներկայացուցիչներ,

Լիոնի և նրա շրջակայքի հայ առաքելական եկեղեցու ազգային միության մեծարգո նախագահ,

Տիկնայք և պարոնայք,

Ինը տարվա ընթացքում երկրորդ անգամ է, որ մեր քաղաքը մեծագույն պատիվն ունի ընդունելու Հայ առաքելական եկեղեցու Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինին:

Խորապես զգացված և Նորին Սրբությունը մեր մեջ ունենալու խորունկ գոհունակությամբ առնեցուն, հանուն քաղաքապետական խորհրդի իմ գործակիցների և հանուն մեր քաղաքի ողջ բնակչության, որը լայնորեն ներկայացված է այս դահլիճում, ես Նրան մաղթում եմ բարի գալուստ Դեսին:

Այս օրերին Նորին Սրբությունը Ֆրանսիայում և մասնավորապես Լիոնի շրջանում կատարում է Իր հովվապետական այցելությունը, որի ընթացքում Նա հանդիպումներ է ունենում մեր երկրի ղեկավարների հետ:

Մենք, հետևաբար, առավել ևս հպարտ ենք զգում մեզ՝ ընդունելու Նրան Դեսին՝ քսան հազար բնակիչներից բաղկացած այս համեստ քաղաքը, որը սակայն իր զարգացումը, հատկապես համաշխարհային երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում, մեծ չափով պարտական է հայկական կարևոր մի համայնքի գալստին և ներկայությանը այստեղ, և այս հանգամանքը մեր քաղաքի պատմության մեջ արձանագրվում է որպես մի կարևոր և յուրահատուկ երևույթ:

Մենք մասնավորապես ուրախ ենք ընդունելու հայ ժողովրդի հոգևոր գերագույն իշխանավորին, որովհետև այս այցելությունը թույլ է տալիս մեզ արտահայտել բարեկամության, հարգանքի և եղբայրության այն ջերմ զգացումները, որ մենք տածում ենք Նրա հայրենակիցների նկատմամբ:

Դժբախտաբար ժամանակը խիստ կարճ է, որպեսզի կարողանամ մանրամասնորեն նկարագրել պատմությունը մոտավոր անցյալի և հատկապես 1923—1925 թվականները երկարող այն հերոսական տարիների, որոնց ընթացքում հազարավոր հայրենազուրկ հայեր, գաղթելով Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Հունաստանից, եկան Ֆրանսիա: Ինչպես անտիկ շրջանի հույն ծովագնացները, նրանք, Մարսելի նավահանգիստ իջնելուց հետո, բարձրացան Ռոնի հովիտը՝ իրենց անցած ճանապարհի վրա հիմնելով համայնքներ Վալանսում, Ռոմանում, Վիենում, Լիոնում և Դեսինում:

Ինչո՞ւ Դեսինում:

Որովհետև այդ թվականներից քիչ ժամանակ առաջ, հյուսվածեղենի արդյունաբերությունը հեղաշրջվել էր արհեստական մետաքսի արտադրության մի նոր եղանակի հայտնագործությամբ, և Դեսինում մի կարևոր գործարան բաց էր արել իր դռները: Նրա տնօրենը՝ պարոն Կյուզենը, իմանալով հյուսվածեղենի արտադրության մեջ հայ բանվորների վարպետության մասին, մեկնեց Հունաստան՝ տեղում հավաքագրելու համար բազմաթիվ հայ ընտանիքների, որոնք եկան այստեղ հավաքական պայմանագրերով: Սկզբնական այս կորիզն աճեց տարիների ընթացքում, և հարյուրավոր հայ ապաստանյալներ համախմբվեցին մեր քաղաքում:

Դա սկիզբը հանդիսացավ եղբայրության մի մեծ շարժման, որն այնուհետև գնալով ուռճացավ:

Այդ եղբայրությունն ամենից առաջ արտահայտվում էր դպրոցական գրասեղանների վրա, որտեղ հայ մանուկներն ամուր կապեր հաստատեցին իրենց ֆրանսիացի ընկերների հետ և որտեղ նրանք հանդես բերեցին նաև մտավոր լուրջ կարողություններ:

Տարիների ընթացքում հայ ապաստանյալները մերվեցին մեր քաղաքի հասարակության հետ և աչքի ընկան իրենց քաջությամբ և աշխատասիրությամբ:

Այդ եղբայրությունը, հետզհետե ավելի ուժեղանալով, ցայտուն կերպով երևան եկավ մանավանդ համաշխարհային երկրորդ պատերազմի սկզբին՝ 1939 թվականին, երբ հայերը հայրենիքի պաշտպանության համար Ֆրանսիայի կոչին պատասխանեցին՝ այո:

Այդ ժամանակվանից նրանք, որպես ֆրանսիական պետության լիիրավ քաղաքացիներ, ամբողջական կերպով և վերջնականապես շաղախվեցին մեր հասարակության հետ Դեսինում, և այսօր ընտրյալ մարդկանց շարքին են գտնվում նաև ծագումով հայ դեսինաբնակ քաղաքացիներ, որոնց թվում և իմ առաջին տեղակալն ու օգնականը՝ պրն. Արսեն Մարկոսյանը, որն իր պաշտոնի հետ կապված ստիպողական կարևոր գործի բերումով այսօր բացակայում է այս սրահից և որի համար խնդրում եմ Նորին Սրբության ներողամտությունը:

1972 թվականին այդ եղբայրությունը իր բարձրակետին հասավ, երբ Դեսինում կանգնեցվեց մի հոյակապ հուշարձան ի հիշատակ 1915 թվականի Մեծ եղեռնի բյուրավոր հայ զոհերի, եղեռն, որի թատերավայրը հանդիսացան Անատոլիայի բարձրավանդակը և Միջագետքի անապատները:

Այդ հուշակոթողը, մի պարզ հիշատակ լինելուց ավելի, դարձել է մի ճշմարիտ խորհրդանշան մեր երկու ժողովուրդների միասնության:

Ահա, ամփոփ գծերի մեջ, այն կարևոր դերը, որ Նորին Սրբության հայրենակիցները կատարել են ավելի քան կես դարուց ի վեր Դեսինում, որը դարձել է նրանց երկրորդ հայրենիքը և հիշարժան նվիրական մի վայր սփյուռքի ամբողջ հայության համար:

Թող Նորին Սրբությունը բարեհաճի ընդունել այս նվերները, որոնք, հակառակ համեստ լինելուն, պիտի մնան ֆրանսիացի և հայ ժողովուրդների միջև գոյություն ունեցող համակրանքի, փոխադարձ հարգանքի և եղբայրության որպես վկայություն, ժողովուրդներ, որոնք բազում կապերով արդեն կապված են եղել միմյանց՝ սկսած սուրբ վայրերում միջնադարյան խաչակրաց արշավանքների հեռավոր ժամանակաշրջանից:

Այս գրքերից մեկը ուսման երրորդ աստիճանի դոկտորական մի ավարտաճառ է, որի պաշտպանությունը տեղի է ունեցել Լիոնի համալսարանում, Բելգրութից եկած մի հայուհու՝ տիկին Անդա Պուճիգանյանի կողմից, որը ներկայումս մասնագիտանում է այնտեղ աշխարհագրության գծով:

Մյուսը մի աշխատություն է լիոնյան մետաքսագործության վերաբերյալ, որի մասնաճյուղերից մեկը հանդիսացավ, Կոմս Շարդոննեի հայտնագործությունից հետո, Դեսինում բացված գործարանը, որը մասնագիտացված էր այդ ժամանակաշրջանում նոր երևան եկած արհեստական մետաքսի արտադրության բնագավառում:

Թույլ տվեք ինձ վերջապես Քաղաքապետական Խորհրդի, անձնապես իմ և Դեսինի ամբողջ բնակչության անունից արտահայտել որքան խոր, նույնքան և հիացական հարգանքի զգացումներ Նորին Սրբությանը, որովհետև Նրա այցելությունը Դեսին նվիրագործում է այդ հարաբերությունները հոգևոր, իմացական և բարոյական իմաստով:

Հանուն Դեսինի հայ եկեղեցու վարչության և համայնքի, վարչության քարտուղար պրն. Մեսրոպ Պայլընտրյանը հետևյալ ֆրանսերեն ուղերձով ողջունեց պրն. քաղաքագլխին.

«Ձերդ Սրբություն,

Մեծահարգ պրն. քաղաքագլուխ,

Մեզ համար մեծ պատիվ է, որ այսօր մեր այս փոքրիկ քաղաք Դեսինում ընդունում ենք այցելությունը Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս, Նորին Սրբություն Վազգեն Առաջինին: Այս առթիվ մենք կցանկանայինք մեր խորազգաց շնորհակալությունը հայտնել Դեսինի մեծարգո քաղաքագլխին և քաղաքապետական խորհրդի անդամներին, որոնք ազնիվ գտնվեցին Հայոց Հայրապետի պատվին այս ընդունելությունը կազմակերպելու քաղաքապետարանի այս դահլիճում:

Հանդիսավոր այս պահին իմ մեջ արթնանում են հեռավոր հիշատակներ. հիսուն տարի առաջ էր, երբ մի փոքր ժողովրդի զավակները, զարհուրելի մի սպանդից վերապրողներ, ոտք էին դնում Ֆրանսիայի այս հյուրընկալ հողի վրա՝ խեղճ, դժբախտ, ընչազուրկ և մանավանդ անտեր ու անօգնական:

Կես դար հետո սակայն, որպես լիիրավ քաղաքացիները այս երկրի, մենք շատ ուրախ ենք այսօր, որ կարողանում ենք Նորին Սուրբ Օծությանը ընդունել այս տան մեջ և, եթե պարոն քաղաքագլուխն ինձ թույլատրի, կհամարձակվեմ ասել՝ մեր տան մեջ, մատուցելու համար մեր երկյուղած և ամենախորին հարգանքը մեր սիրեցյալ Հայրապետին՝ ժողովուրդների բարեկամության անխոնջ ուխտավորին, որը լցված է անհուն սիրով ոչ միայն իր ժողովրդի, այլև համայն մարդկության հանդեպ:

Որդիական ակնածանքով մենք բոլորս խոնարհվում ենք Խաղաղության Առաքյալի առջև»:

Ի պատասխան Դեսինի մեծահարգ քաղաքագլխի գեղեցիկ ողերձի, Հայոց Հայրապետը Իր երախտագիտությունը և շնորհակալությունը հայտնեց պրն. Մուտենին, որպես հայ եկեղեցու գերագույն պետի Իր անձի հանդեպ ցույց տրված բարձր ուշադրության համար՝ շեշտելով միաժամանակ, որ կենտրոնական Ֆրանսիայի այս հյուրընկալ հողի վրա հայ ժողովրդի զավակները, ֆրանսիացի ազնիվ և հավատացյալ ժողովրդի ծոցում, կազմակերպված իրենց եկեղեցու շուրջ, ապրում են խաղաղ, բարօր ու բարգավաճ:

Այնուհետև, քաղաքապետարանում տեղի ունեցած պատշաճ հյուրասիրությունից հետո, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ տվեց Դեսինի քաղաքապետարանին և պրն. քաղաքագլխի ուղեկցությամբ այցելեց Դեսինի Ազատագրության հրապարակի կենտրոնում կանգնեցված Հայ նահատակաց հուշարձան, ուր ծաղկեպսակ զետեղեց Ապրիլյան մեծ եղեռնի զոհերի հիշատակին և «Հոգւոց» արտասանեց:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԴԵՍԻՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ապա մեծ թափորով Վեհափառ Հայրապետը, միշտ քաղաքագլխի ուղեկցությամբ, առաջնորդվեց դեպի Դեսինի հայոց եկեղեցի, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով: Եկեղեցում և նրա շրջափակում գտնվող հայ ժողովրդի խուռներամ բազմությունը սրտագին և ջերմ արտահայտություններով ողջունեց Հայոց Հայրապետին: Այստեղ եկեղեցական կարճ արարողությունից հետո Հայոց Հայրապետը հանդես եկավ հրաժեշտի Իր օրհնությամբ և պատգամով:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔԸ ԴԵՍԻՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Ամէն»:

Աստուծո ողորմությամբ Մենք ճամփա ելանք մեր մայր երկրեն և ս. Էջմիածնեն, հրավերովը հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Սերովբե արքեպիսկոպոսի. այցելություն տալու համար Ֆրանսայի մեր հայկական եկեղեցիներուն և Ֆրանսա բնակող մեր հավատացյալ զավակներուն:

Այցելության երթալ արտասահմանի մեր հայ եկեղեցիներուն և մեր ժողովուրդին, ատիկա Մեր հայրապետական պարտականություններեն մեկն է: Եվ փառք Տիրոջը, որ Մեզի ուժ, կարողություն կներշնչե, և Մենք կկարողանանք այդ պարտականությունը կատարել հաջող կերպով:

Մեր գահակալության մոտ քսանհինգ տարիներու ընթացքին, բազմաթիվ անգամներ Մենք եկանք տեսության ի սփյուռս աշխարհի ցրված Մեր հոգևոր զավակներուն: Դուք տեղյակ եք անշուշտ, որ 1956 թվականեն ի վեր Մենք եղանք երեք անգամ Ֆրանսա, երկու անգամ Ամերիկաները՝ Հյուսիսային և Հարավային. եղանք արևելյան կարգ մը երկիրներ՝ Եվրոպա և Մերձավոր Արևելք, և ամեն տեղ Մենք ուրախացանք՝ տեսնելով, որ Մեր հոգևոր զավակները, հայ ժողովուրդի զավակները համախմբված կապրին Աստուծո օրհնության ներքև իրենց մայր եկեղեցվո կամարներուն տակ:

Ասիկա դարավոր ավանդությունն է մեր ազգին՝ համախմբված ապրիլ, համայնական կյանք ապրիլ Հայաստանյայց առաքելական եկեղեցվո մեջ, որ մեր ազգային եկեղեցին է, մեր մայր եկեղեցին: Ոչ մեկ հայ մարդ աշխարհի վրա Մենք չենք նկատեր հեռացած Հայաստանյայց եկեղեցիեն: Ամեն հայ քրիստոնյա անդամն է, իր ծնունդով իսկ և իր նախահայրերու հիշատակով, մեր այս աստվածակառույց հաստատության, որու կեդրոնը ս. Էջմիածինն է:

Մեր ազգը հին ազգ է, աշխարհի հնագույն և քաղաքակիրթ ազգերեն մեկը, որ իր ազգային ինքնությունը ամբողջապես գտավ իր քրիստոնեությամբ: Քրիստոնեությունն է, քրիստոնեական հավատքն է, Հիսուսի Ավետարանի լույսն է, որ պայծառակերպեց հայ ժողովուրդի միտքը և հոգին, և մենք դարձանք ազգություն, մշակույթ ստեղծող ազգ, բառին ամբողջական իմաստով: Եվ այդ հրաշալի իրադարձությունը տեղի ունեցավ, մոտ հազար յոթը հարյուր տարիներ առաջ, ս. Գրիգոր Լուսավորչի երանելի օրերուն, Տրդատ թագավորի ժամանակ, երբ մեր ազգը իր սիրտը բացավ Քրիստոսի լույսին և վերածնավ, պայծառակերպվեցավ և դարձավ մեկ ազգ, մեկ ժողովուրդ, մեկ եկեղեցի, մեկ պատմություն, մեկ մշակույթ, մեկ ապագա: Եվ այդպես ապրեցավ հայ ազգը դարեր, դարեր շարունակ, հակառակ շատ հաճախ դժբախտ պատահարներու: Որովհետև Հայաստանը դարձավ շատ անգամներ ոտքի կոխան՝ բարբարոս, անաստված բռնակալ ցեղերու, որոնք խուժեցին անընդհատ Ասիայի մութ խորքերեն:

10—11-րդ դարերուն Հայաստանի պետությունն ալ կործանեցավ, և մոտ հազար տարի հայ ժողովուրդը խավարի մեջ ապրեցավ դաժան բռնակալներու ծանր լուծին տակ:

Եվ սակայն, դարեր շարունակ մեր ազգը իր հավատքը, իր հույսը չկորսնցուց իր քրիստոնեությամբ, իր մշակույթով, իր մայրենի լեզվով և իր քաջությամբ: Շատ անգամներ հերոսական պայքար մղեց մեր ժողովուրդը, պաշտպանության համար իր հավատքին և իր հայրենիքի ազատության:

Հայ ժողովուրդը չի կրնար մոռնալ մանավանդ վերջին իր ողբերգությունը, 1915-ի ցեղասպանությունը, որուն զոհերուն հուշարձանը դուք այստեղ կառուցեր եք: Եվ պատիվ է ձեզի, որ Ֆրանսայի մեջ առաջին հուշարձանը այստեղ է բարձրացեր, որուն համար Մենք Մեր օրհնությունը կբերենք ձեզի և Դեսինի քաղաքային իշխանություններուն:

Այսպիսի ողբերգություններեն հետո, սակայն, հրաշքի համազոր պայմաններու մեջ, մեր ազգը ոտքի կանգնեցավ: Մեր ժողովուրդին գրեթե կեսը նահատակվեցավ, բայց մնացած կեսը նոր կյանք ստեղծեց: Հիմնվեցավ մեր հայկական պետությունը, որ այսօր քայլ առ քայլ կշարունակե իր հառաջադեմ կյանքը, վերաշինելով և զարգացնելով իր ազգային նոր մշակույթը, փառավոր նոր արժեքներով հարստացնելով մեր բազմադարյան հայ մշակույթը:

Մեր հայրենիքի վերածնունդի կողքին, Մենք ուրախ ենք հաստատելու, որ նաև սփյուռքի Մեր զավակները նույն ոգիով, նույն վերածնունդի, նույն հայկական շունչով համախմբված կապրին իրենց եկեղեցիներուն շուրջ, պահպանելով իրենց հայրերու, իրենց նախահայրերու լույս հավատքը, իրենց բարոյական առաքինությունները, իրենց ավանդությունները, իրենց մայրենի լեզուն, միաժամանակ հավատարիմ, կարգապահ և շինարար քաղաքացիները մնալով այս հյուրընկալ երկրին՝ ասպետական և մարդասեր Ֆրանսային: Ինչպես նախորդ անգամներուն, նաև այս անգամ Մենք կոչեցնենք, որ ամեն տեղ մեր ժողովուրդի զավակները այս ոգիով կապրին, և ամեն տեղ պետական ու քաղաքային իշխանությունները գովեստով կխոսին հայերու մասին: Ասիկա պատիվ կբերե ձեզի, և Մեզի ալ՝ հոգեկան մխիթարություն: Մեր հայրապետական հորդորն է և պատգամը, որ շարունակեք միշտ այսպես ապրիլ, երախտապարտ՝ ֆրանսական իշխանություններուն և ֆրանսացի ազգին, միշտ անսասան պահպանելով ձեր ավանդությունները, ձեր մայրենի լեզուն, և համախմբված ապրիք ձեր համայնքային կյանքը՝ սիրով միաբանած:

Հայերը գաղափարական կամ այլ հարցերով գուցե տարբեր մտածումներ կրնան ունենալ, բայց կարևորագույնը այն է, որ եկեղեցիով և իրենց կրոնական կազմակերպությամբ բոլոր հայերը եղբայրանան և դառնան մեկ հոգի և մեկ մարմին, իբրև հավատացյալները մեր սուրբ եկեղեցիին, Աստուծո օրհնությանը ներքև, որ մեզի կբաշխվի հազար յոթը հարյուր տարիներե ի վեր, կբաշխվի բոլոր հայերուն ամենաչն հայոց Մայր Աթոռ ս. Էջմիածնեն, որ մանավանդ երկրորդ համաշխարհային պատերազմեն հետո և ի մասնավորի վերջին քսան տարիներուն, մեր վերածնած հայրենիքի նպաստավոր պայմաններու շնորհիվ կբարեկարգվի, կշքեղանա և կզորանա այնտեղ, մեր մայր երկրին մեջ:

Դարեր շարունակ մեր սրբավայրերը քարուքանդ եղած են անցյալի դժբախտ պատահարներու հետևանքով: Մեր պարտքն է տակավ վերաշինել մեր աղոթքի տուները, և այդ գործն է, որ Մենք ահավասիկ 20—22 տարիներե ի վեր կկատարենք: Լսած եք հարկավ և տեսած, թե ինչպես փառավոր կերպով վերաշինված են մեր օրերուն բազմաթիվ աղոթքի տուներ, պատմական վանքեր, եկեղեցիներ, հայկական դասական ճարտարապետության ոճով: Հիշենք ս. Էջմիածնի վանքը, Օշականի, Հռիփսիմեի, Գայանեի, Շողակաթի, Խոր Վիրապի, Գեղարդի, ս. Խաչի և տակավին բազմաթիվ այդպիսի նշանավոր վանքեր, որոնք պատիվ կբերեն մեր ամբողջ ազգին ոչ միայն կրոնական, այլ նաև ճարտարապետական իմաստով:

Անցյալ տարի Երևանի մեջ միջազգային սիմպոզիում մը եղավ՝ նվիրված հայ ճարտարապետության: Աշխարհի ամեն կողմերեն օտար մասնագետներ եկան, քանի մը հարյուր հոգի, և այցելեցին մեր վանքերը, որոնք բացառիկ գնահատանքի արժանացան:

Ահավասիկ այս բարի լուրերը հաղորդելով ձեզի, կուզենք ձեզմե բաժնըվիլ այսօր՝ անգամ մը ևս բոլորիդ բաշխելով սիրո ողջույնը հայաստանցի ձեր եղբայրներեն և քույրերեն և օրհնությունը Աստուծո Մայր Աթոռ ս. Էջմիածնեն:

Թող Աստված միշտ այսպես լուսավոր, լուսառատ և հաստատ պահե ձեր այս եկեղեցին:

Թող Աստված միշտ ձեզ պահե-պահպանե համերաշխ, սիրո միության մեջ, ձեռք-ձեռքի տված իբրև հարազատ եղբայրներ:

Թող Աստված ուժ և եռանդ պարգևե ձեզի ամենքիդ, որպեսզի ձեր կյանքը վարեք շինարար կերպով, արդյունավետ կերպով, հոգուտ ձեր ընտանեկան կարիքներուն, հոգուտ ձեր համայնական կյանքին և հոգուտ այս քաղաքին, որուն ծոցին մեջ կբնակիք ու կաշխատիք՝ ձեր նպաստը բերելով ֆրանսացի ձեր եղբայրներու կողքին, այս քաղաքի տնտեսական, մշակութային կամ գուցե նույնիսկ գիտական հառաջընթացին:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ»: Ամեն: